# ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Գոռ Միրզոյան**
*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

«Մաքսանենգություն» (իտալերեն՝ «contraband», այսինքն՝ «contra» – ընդդեմ և «band» – կառավարական հրամանագիր) եզրույթը հայտնի է մարդկությանն անհիշելի ժամանակներից: Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր երկրներում այն հասկացվում է որպես որոշակի սահմանով (պետական կամ մաքսային) ապրանքների, արժեքների կամ այլ առարկաների ապօրինի տեղափոխում:

Մաքսանենգության պատմությունը վկայում է, որ ժամանակի ընթացքում մաքսավորների համար ավելի ու ավելի դժվար է դառնում հանրորեն վտանգավոր այդ երևույթի դեմ պայքարելը: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մաքսանենգությամբ հիմնականում զբաղվում են ոչ միայն համարձակ և տաղանդավոր, այլև օրենքներին ու իրավակարգն ապահովողների հոգեբանությանը քաջատեղյակ մարդիկ[1]:

Մաքսանենգության դեմ պայքարի հիմնախնդիրների կրիմինալոգիական հետազոտության շրջանակներում հատկապես կարևորվում է հանցավորության տվյալ դրսևորումը բնութագրող քանակական և որակական այնպիսի ցուցանիշների վերլուծությունը, ինչպիսիք են դրա վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը: Բանն այն է, որ հանցավոր այս կամ այն երևույթի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հնարավորինս բազմակողմանի ու ամբողջական պատկերացում կազմել որոշակի տարածքային և ժամանակային սահմաններում դրա տարածվածության (քանակի), կառուցվածքային (ներքին բովանդակության) առանձնահատկությունների և հիմնական միտումների (ժամանակի ընթացքում փոփոխությունների) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ քննարկվող հանցագործության, ինչպես և ընդհանուր հանցավորության վերջին տասը տարիների միտումները բավականին անբարենպաստ են: Մասնավորապես, 2014 թ.-ին, նախորդ տարիների համեմատ, արձանագրվել է մաքսանենգությունների աննախադեպ աճ: Այսպես, 2005 թ.-ի համեմատ 2014 թ.-ին մաքսանենգությունների աճը կազմել է +164, 2006 թ.-ի համեմատ՝ +152, 2007 թ.-ի համեմատ՝ +137, 2008 թ.-ի համեմատ՝ +145, 2009 թ.-ի համեմատ՝ +142, 2010 թ.-ի համեմատ՝ +93, 2011 թ.-ի համեմատ՝ +111, 2012 թ.-ի համեմատ՝ +162 և 2013 թ.-ի համեմատ՝ +118: Այսինքն, 2014 թ.-ին ՀՀ-ում մաքսանենգությունների առավելագույն աճն արձանագրվել է 2005, իսկ նվազագույնը՝ 2010 թվականի համեմատ: Ընդ որում, եթե 2013 թ.-ի համեմատ 2014 թ.-ին ընդհանուր հանցավորությունը

[1] Տե՛ս **Некрасова Т.А.** Понятие контрабанды. Содержание, состав преступления, его анализ, а также способы совершения // Известия Южного федерального университета. Технические науки, 2003. Т. 34, № 5, էջ 272:

բացարձակ թվերով զգալիորեն նվազել է, ապա մաքսանենգությունները, ընդհակառակը, էապես աճել են (տե՛ս աղյուսակ 1):

Տվյալ հանգամանքը, կարծում ենք, նախ և առաջ պայմանավորված է քննարկվող հանցագործությունների հաշվառման-գրանցման աշխատանքների էական բարելավմամբ և լատենտայնության մակարդակի նվազեցմամբ, ինչը բավականին հուսադրող է: Բանն այն է, որ փորձագիտական տարբեր գնահատականներով տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների (այդ թվում՝ մաքսանենգությունների) լատենտայնության մակարդակը բավականին բարձր է[1]:

*Աղյուսակ 1*

**ՀՀ-ում գրանցված մաքսանենգությունների վիճակը 2005-2014 թթ.**

| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը հանցագործություն | 8875 | 9757 | 8428 | 9271 | 14339 | 15477 | 16572 | 15776 | 18333 | 17546 |
| ***Մաքսանենգություն (մասն. հանց. կատ.,%)*** *(մասն. տնտ. գ. դ..., %)* | ***50 (0.56)*** *(17.8)* | ***62 (0.64)*** *(19.8)* | ***77 (0.91)*** *(26.6)* | ***69 (0.74)*** *(15.1)* | ***72 (0.50)*** *(10.3)* | ***121 (0.78)*** *(13.5)* | ***103 (0.62)*** *(9.26)* | ***52 (0.33)*** *(6.75)* | ***96 (0.52)*** *(8.52)* | ***214 (1.22)*** *(24.6)* |
| Տնտ. գործ. դեմ. ուղղված հանց. | 281 | 313 | 289 | 456 | 696 | 896 | 1112 | 770 | 1127 | 870 |
| Հարկեր, տուրքեր վճ. խուսափելը | 37 | 60 | 68 | 140 | 159 | 226 | 246 | 175 | 302 | 110 |
| Կեղծ փողեր կամ արժեթղթեր ... | 60 | 52 | 57 | 80 | 136 | 94 | 280 | 95 | 165 | 225 |
| Ապօր. կամ կեղծ ձեռնարկատիրութ. | 46 | 61 | 25 | 83 | 88 | 80 | 39 | 30 | 60 | 39 |
| Տնտ. գործ. դեմ ուղղվ. այլ հանցներ | 88 | 78 | 62 | 84 | 241 | 375 | 444 | 418 | 504 | 282 |

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ 2005-2007 թթ. ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է մաքսանենգությունների անընդհատ աճ: Այնուհետև՝ 2008 թ.-ին, դրանց թիվը մի փոքր նվազել է, իսկ հետագայում՝ 2009-2010 թթ., կտրուկ աճել: 2011-2012 թթ. ընթացքում կրկին արձանագրվել է գրանցված մաքսանենգությունների կտրուկ նվազում: Այնուամենայնիվ, հաջորդ երկու տարիներին այդ հանցագործությունների թիվը կրկին կտրուկ աճել է՝ 2014 թ.-ին, ինչպես արդեն նշվել է, հասնելով աննախադեպ ցուցանիշի: Մաքսանենգությունների վերոհիշյալ շարժընթացն առավել պատկերավոր արտացոլված է ստորև ներկայացվող գծապատկերում (տե՛ս նկար 1):

[1] Տե՛ս **Антонян Ю.М.** Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, էջեր 242-243:

*Նկար 1*

**Մաքսանենգությունների շարժընթացը ՀՀ-ում 2005-2014 թթ.**




Վերոհիշյալ վիճակագրական տվյալներից կարելի է հետևություն անել նաև, որ ՀՀ-ում մաքսանենգությունների վերջին տասը տարիների շարժընթացը զիգզագաձև զարգացում է ունեցել. մերթ նվազել է, մերթ աճել: Նշված հանցագործությունների դինամիկայի միջին ցուցանիշները հաշվարկելու համար, սակայն, առավել նպատակահարմար ենք համարում կիրառել դինամիկական շարքի հարթեցման մեթոդը: Վերջինիս նպատակը շարքը կազմող ցուցանիշների նշանակությունների տատանումների վերացման միջոցով հետազոտվող երևույթի զարգացման հիմնական միտումների բացահայտումն է: Այլ կերպ ասած՝ տվյալ մեթոդով համապատասխան շարքի փաստացի ցուցանիշներից հաշվարկվում են միջինները, և փաստացի տատանվող շարքը փոխարինվում է սահուն, հարթեցված շարքով, որի բնույթը և առանձնահատկությունները կարող են առավել հստակ բացահայտվել[1]:

Այսպիսով, քննարկվող դինամիկական շարքը հարթեցնելու նպատակով սահող միջինի մեթոդի կիրառմամբ փորձենք բացահայտել ՀՀ-ում 2005-2014 թթ. ընթացքում գրանցված մաքսանենգությունների շարժընթացի բնույթն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, նկար 1-ում արտացոլված է հետևյալ դինամիկական շարքը.

| Տարեթիվ | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մաքսանենգություն | 50 | 62 | 77 | 69 | 72 | 121 | 103 | 52 | 96 | 214 |

[1] Տե՛ս **Առաքելյան Ս. Վ., Գաբուզյան Ա. Հ., Մարգարյան Ա. Ռ.** Կրիմինոլոգիական հետազոտությունների մեթոդիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր.: ԵՊՀ հրատ., 2001, էջեր 61-62:

Ներկայացված շարքում, ինչպես արդեն նշվել է, մաքսանենգությունների շարժընթացում հստակ միտումներ չեն նկատվում. դրանց քանակը բնութագրող թվերը մերթ նվազում են, մերթ աճում: Հետևաբար փաստացի ցուցանիշներն այսպես կոչված սահող միջիններով փոխարինելու անհրաժեշտություն է առաջանում: Վերջիններս հաշվարկում ենք իրար հետևող հինգ մակարդակներից՝ յուրաքանչյուր անգամ մեկ ինտերվալով տեղաշարժն օգտագործելով (միջինը՝ հինգից): Արդյունքում կստանանք հետևյալ պատկերը՝ 1) (50+62+77+69+72) / 5 = **66.0**, 2) (62+77+69+72+121) / 5 = **80.2**, 3) (77+69+72+121+103) / 5 = **88.4**, 4) (69+72+121+103+52) / 5 = **83.4**, 5) (72+121+103+52+96) / 5 = **88.8**, 6) (121+103+52+96+214) / 5 = **117.2**:

Փաստորեն, վերոհիշյալ եղանակով ձևափոխված շարքը տվյալ դեպքում վերածվում է արտահայտված աճի միտում ունեցող հետևյալ ցուցանիշները պարունակող մի նոր շարքի՝ 66.0, 80.2, 88.4, 83.4, 88.8 և 117.2: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ միջինացված ցուցանիշներով ՀՀ-ում 2005-2014 թթ. ընթացքում գրանցված մաքսանենգությունների շարժընթացում ընդհանուր առմամբ արձանագրվել է արտահայտված աճի միտում, ինչը լուրջ մտահոգության տեղիք է տալիս:

Քննարկվող հիմնախնդիրների կապակցությամբ հարկ ենք համարում հատուկ անդրադառնալ նաև ընդհանուր հանցավորության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքներում մաքսանենգությունների մասնաբաժինների ցուցանիշների վերլուծությանը:

Աղյուսակ 1-ից մասնավորապես հետևում է, որ ընդհանուր հանցավորության կառուցվածքում վերոհիշյալ հանցագործությունների մասնաբաժինը բավականին մեծ է՝ 0.68%: Ընդ որում, հանցավորության կառուցվածքում մաքսանենգությունների մասնաբաժինն առավել մեծ է եղել 2014 թ.-ին (1.22%), իսկ առավել փոքր՝ 2012 թ.-ին (0.33%):

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում ևս, ինչպես հետևում է աղյուսակ 1-ից, քննարկվող հանցագործությունների մասնաբաժինը բավականին մեծ է՝ 13.5%: Մինչդեռ նշված հանցագործությունների կառուցվածքում, ի տարբերություն ընդհանուր հանցավորության, մաքսանենգությունների մասնաբաժինն առավել մեծ է եղել ոչ թե 2014, այլ 2007 թ.-ին (26.6%): Ինչ վերաբերում է դրանց առավել փոքր մասնաբաժնին, ապա, ինչպես և ընդհանուր հանցավորության պարագայում, այն արձանագրվել է 2012 թ.-ին (1.22%):

Հարկ ենք համարում նշել նաև, որ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում, ինչպես հետևում է աղյուսակ 1-ից, առավել մեծ մասնաբաժինն ունի հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը (22.4%): Դրան հաջորդում են կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը (18.3%), մաքսանենգությունը (13.5%), ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրությունը (8.1%): Այսինքն, թվարկված հանցավոր արարքներն ընդհանուր առմամբ կազմում են տնտեսական գործունեության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների 62.3%-ը:

Մաքսանենգությունների կառուցվածքում հանցավորության տվյալ դրսևորման տարբեր տեսակների մասնաբաժինների կապակցությամբ նախ և առաջ պետք է նշել, որ դրանց շարքում առավել տարածված են ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին

մասով նախատեսված արարքները կատարելու դեպքերը, որոնց մասնաբաժինը կազմում է 65.5%: Դրանց հաջորդում են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքները կատարելու դեպքերը (31.6%): Ընդ որում, դրանց շարքում գերակայում են (ավելի քան 90%) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ու խիստ ներգործող նյութերի մաքսանենգության դեպքերը: Մաքսանենգության՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով նախատեսված արարքները կատարելու դեպքերի մասնաբաժինն ամենափոքրն է (0.2%): Ընդ որում, դրանց շարքում գրանցված բոլոր դեպքերում մաքսանենգությունը կատարվել է պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով: ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 4-րդ մասով նախատեսված արարքը (մաքսանենգություն, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից) կատարելու դեպքերի մասնաբաժինը նույնպես բավականին փոքր է (2.7%): Այդ ցուցանիշներն առավել պատկերավոր արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում (տե՛ս աղյուսակ 2):

*Աղյուսակ 2*

**ՀՀ-ում գրանցված մաքսանենգությունների կառուցվածքը 2004-2014 թթ.**

| | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը մաքսանենգութ.** | 34 | 50 | 62 | 77 | 69 | 72 | 121 | 103 | 52 | 96 | 214 |
| **Հոդվ. 215, մաս 1** (մասնաբաժ., %) | 25 (73.5) | 36 (72.0) | 45 (72.6) | 60 (77.9) | 49 (71.0) | 47 (65.3) | 70 (57.9) | 58 (56.3) | 21 (40.4) | 61 (63.5) | 150 (70.1) |
| **Հոդվ. 215, մաս 2** (մասնաբաժ., %) | 8 (23.5) | 14 (28.0) | 14 (22.6) | 17 (22.1) | 19 (27.5) | 23 (31.9) | 39 (32.2) | 42 (40.8) | 31 (59.6) | 34 (35.4) | 59 (27.6) |
| **Հոդվ. 215, մաս 3** (մասնաբաժ., %) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 0 (0.0) | 1 (1.1) | 1 (0.5) |
| **Հոդվ. 215, մաս 4** (մասնաբաժ., %) | 1 (3.0) | 0 (0.0) | 3 (4.8) | 0 (0.0) | 1 (1.5) | 2 (2.8) | 12 (9.9) | 3 (2.9) | 0 (0.0) | 0 (0.0) | 4 (1.8) |

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ մաքսանենգությունների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ով նախատեսված հանցագործության հասարակ տեսակի առավել մեծ մասնաբաժինն արձանագրվել է 2007 թ.-ին (77.9%), իսկ առավել փոքրը՝ 2012 թ.-ին (40.4%): Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության առավել մեծ մասնաբաժինն արձանագրվել է 2012 թ.-ին (59.6%), իսկ առավել փոքրը՝ 2007 թ.-ին (22.1%): Այսինքն՝ 2012 թ.-ին մաքսանենգության հասարակ տեսակի մասնաբաժնի էական նվազումը գլխավորապես պայմանավորված է եղել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյու-

թերի և դրանց պրեկուրսորների ու խիստ ներգործող նյութերի մաքսանենգության դեպքերի թվի զգալի ավելացմամբ:

Մաքսանենգության՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով նախատեսված դեպքերի առավել մեծ մասնաբաժինն արձանագրվել է 2013 թ.-ին (1.1%): Հաջորդ տարում քննարկվող հանցագործության տվյալ տեսակի մասնաբաժինը կազմել է 0.5%: Մնացած տարիների ընթացքում պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով մաքսանենգություն կատարելու որևէ դեպք չի արձանագրվել, ինչը, սակայն, մեր կարծիքով, չի համապատասխանում իրականությանը և պայմանավորված է նման դեպքերի լատենտայնության բարձր մակարդակով: Տվյալ հանգամանքը հիմնավորվում է նաև հասարակության և համապատասխան փորձագետների շրջանում մեր կողմից իրականացված հարցումների արդյունքներով: Մասնավորապես, հարցվողների 95%-ից ավելին համոզմունք է հայտնել, որ ՀՀ-ում կատարվող մաքսանենգությունների շուրջ կեսը, եթե ոչ ավելին, իրականացվում է մաքսային ծառայողների և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ, ինչը նպաստում է նաև դրանց լատենտայնությանը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 4-րդ մասով նախատեսված մաքսանենգությունների առավել մեծ մասնաբաժինն արձանագրվել է 2010 թ.-ին (9.9%), իսկ առավել փոքրը՝ 2008 թ.-ին (1.5%): Միևնույն ժամանակ, 2005, 2007, 2012 և 2013 թթ. կազմակերպված խմբի կողմից մաքսանենգություն կատարելու որևէ դեպք չի արձանագրվել, ինչը, սակայն, մեր կարծիքով, նույնպես չի համապատասխանում իրականությանը: Բանն այն է, որ, ըստ փորձագիտական գնահատականների կազմակերպված հանցավոր խմբերի կողմից կատարվող հանցանքների (հատկապես՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ մաքսանենգությունների) լատենտայնության մակարդակը բավականին բարձր է: Տարբեր հաշվարկներով այն տատանվում է մեկը ութանասունից մինչև մեկը հարյուրի հարաբերակցության շրջանակներում[1]:

Այս առումով հարկ է նշել, որ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների (այդ թվում՝ մաքսանենգությունների) հանրային վտանգավորության բարձրացումը պայմանավորված է ոչ միայն դրանց քանակի և դրանցով պատճառվող վնասի չափերի ավելացմամբ, այլև դրանց կատարման կազմակերպված ձևերի տարածմամբ, ինչը լրջորեն վտանգում է Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը: Բանն այն է, որ կազմակերպված հանցավորության ներխուժումը երկրի տնտեսության ոլորտ և դրա ստվերային հատվածի ավելացումը նպաստում են նաև համապատասխան հանցանքները կատարողների

[1] Տե՛ս **Ставицкий А.А.** Повышенная общественная опасность как один из элементов криминологической характеристики контрабанды наркотиков // Общество и право, 2007, № 4 (18), էջեր 202-203, Глобализация наркобизнеса: угрозы для России и других стран с переходной экономикой. М., 1999, էջեր 6-9, **Третьяков В.И.** Легализация доходов транснациональной преступности и пути противодействия ей в условиях глобализации. Краснодар, 2002, էջ 81, **Boeden G.** Erscheinungsformen und polizeiliche bekampfung smuglichkeiten der organisierten kriminalität // Organisierte Kriminalität. Heidelberg, 1999, http://www.polizei-newsletter.de/documents/Kriminalitaet_als_Erzaehlung.pdf, **Global Report On Crime and Justice.** N.Y., 1999, http://www.uncjin.org/Special/GlobalReport.html, **Oliviero M.B., Simmons A.** Global Civil Society and Corporate Responsibility. London, 2002, http://eprints.lse.ac.uk/55524/:

անպատժելիությանը: Դա, բնականաբար, հանգեցնում է այդ հանցագործությունների տարածմանը, ինչն էլ, իր հերթին, նշված արարքների կատարումը դարձնում է խիստ ցանկալի, եկամտաբեր գործունեության տեսակ՝ խաթարելով հանրապետությունում առկա տնտեսական գործընթացները կարգավորող բնականոն հասարակական հարաբերությունները: Հետևաբար ՀՀ-ում կատարվող մաքսանենգությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վերոհիշյալ հանգամանքներին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ բոլոր այն տարիների ընթացքում, երբ գրանցված մաքսանենգությունների թիվը, նախորդ տարվա համեմատ, նվազել է, դրանց հասարակ տեսակի մասնաբաժինը փոքրացել է: Զուգահեռաբար մեծացել է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ու խիստ ներգործող նյութերի մաքսանենգության մասնաբաժինը: Մասնավորապես աղյուսակ 2-ից պարզ երևում է, որ 2008 թ.-ին, 2007 թ.-ի համեմատ, գրանցված մաքսանենգությունների թիվը նվազել է 8-ով, իսկ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսված արարքների մասնաբաժինը՝ 0.9%-ով, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների մասնաբաժինն ավելացել է 5.4%-ով: Նույն աղյուսակից հետևում է նաև, որ 2011 թ.-ին, 2010 թ.-ի համեմատ, գրանցված մաքսանենգությունների թիվը նվազել է 18-ով, իսկ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսված արարքների մասնաբաժինը՝ 1.6%-ով, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների մասնաբաժինն ավելացել է 8.6%-ով: Աղյուսակ 2-ից պարզ երևում է նաև, որ 2012 թ.-ին, 2011 թ.-ի համեմատ, գրանցված մաքսանենգությունների թիվը նվազել է 51-ով, իսկ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսված արարքների մասնաբաժինը՝ 15.9%-ով, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների մասնաբաժինն ավելացել է 18.8%-ով:

*Աղյուսակ 3*

**Գրանցված և բացահայտված մաքսանենգությունների բաշխվածությունը ՀՀ-ում 2004-2014 թթ.**

| | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Գրանցված* | 34 | 50 | 62 | 77 | 69 | 72 | 121 | 103 | 52 | 96 | 214 |
| *Բացահայտված (%)* | 27 (79.4) | 31 (62.0) | 45 (72.6) | 53 (68.8) | 43 (62.3) | 45 (62.5) | 87 (71.9) | 70 (68.0) | 32 (82.1) | 39 (40.6) | 48 (22.4) |
| *Չբացահայտված* | 2 | 5 | 5 | 13 | 9 | 8 | 12 | 14 | 7 | 7 | 7 |
| *ժամկետն անց* | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 8 |
| *Քննութ. ընթացք. գտնվող* | 5 | 14 | 12 | 11 | 17 | 19 | 22 | 19 | 13 | 49 | 151 |
| *Բացահայտման %-ը* | 93.1 | 86.1 | 90.0 | 80.3 | 82.7 | 84.9 | 87.9 | 83.3 | 82.1 | 83.0 | 76.2 |

Տվյալ հանգամանքը ևս լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Բանն այն է, որ հանցավորության (այդ թվում՝ մաքսանենգությունների) կառուցվածքում տեղի ունեցող բացասական փոփոխությունները կապված են ոչ միայն հանցավոր գործունեության կազմակերպված ձևերի տարածման, այլև թմրամիջոցների ապօրինի շրջանառության ընդլայնման հետ: Ուստի մաքսանենգությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տվյալ հանգամանքը ևս անհրաժեշտ է հաշվի առնել:

Հատուկ ուշադրության է արժանի նաև մաքսանենգությունների գրանցման և բացահայտման վերաբերյալ ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 3) վերլուծությունը:

Ներկայացված աղյուսակից հետևում է, որ ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալներով մաքսանենգությունների բացահայտման տոկոսը բավականին բարձր է՝ միջինը 84.1%: Այս առումով, սակայն, հարկ ենք համարում նշել հանցագործությունների հաշվառման-գրանցման աշխատանքներում առկա մեկ առանձնահատկություն, որը կապված է գրանցված հանցավոր արարքների բացահայտման տոկոսը հաշվարկելու հետ: Մասնավորապես, այն որոշելու համար բավարար չէ գրանցված հանցագործությունների համապատասխան զանգվածում բացահայտված հանցագործությունների մասնաբաժինը հաշվարկելը: Տվյալ դեպքում կիրառվում է հաշվարկի այլ եղանակ, որի համաձայն՝ նախ գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակից պետք է հանել քննության ընթացքում գտնվող հանցագործությունների վերաբերյալ ցուցանիշը, այնուհետև ստացված արդյունքի հարաբերությամբ հաշվարկվում է բացահայտվածների մասնաբաժինը: Այսպես, օրինակ՝ ՀՀ-ում 2014 թ.-ին գրանցված մաքսանենգությունների բացահայտման տոկոսը հաշվարկելու համար անհրաժեշտ է նախ 214-ից հանել 151-ը՝ կստացվի 63: Այնուհետև պետք է պարզել, թե այդ թվի քանի տոկոսն է կազմում տվյալ տարում բացահայտված հանցագործությունների քանակը՝ 48-ը: Հաշվարկի համապատասխան բանաձևը կիրառելով՝ ստանում ենք 76.2%:

Միևնույն ժամանակ պետք է նշել, սակայն, որ հաշվարկի նման տարբերակը, մեր կարծիքով, ոչ այնքան արդարացված է: Մասնավորապես դժվար է համաձայնել, որ բացահայտված հանցագործությունների մասնաբաժինը որոշելու վրա պետք է ազդեցություն ունենան քննության ընթացքում գտնվող հանցագործությունների վերաբերյալ ցուցանիշները: Բանն այն է, որ դրանց որոշակի մասը իրականում կարող է և չբացահայտվել: Ուստի բացահայտված հանցագործությունների (այդ թվում՝ մաքսանենգությունների) իրական մասնաբաժինը որոշելու համար, ըստ մեզ, անհրաժեշտ է հաշվի առնել միայն հաշվետու տարում փաստացի բացահայտված հանցավոր արարքների քանակը: Նման պարագայում, ինչպես հետևում է նաև աղյուսակ 3-ից, կստացվեն լիովին այլ ցուցանիշներ: Այսպես, վերոհիշյալ աղյուսակից կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում 2004-2014 թթ. ընթացքում փաստացի բացահայտված մաքսանենգությունների մասնաբաժինն էապես ավելի փոքր է, քան պաշտոնական վիճակագրական աշխատանքներում օգտագործվող հաշվարկման եղանակի կիրառմամբ ստացվածը. ոչ թե 84.1% է, այլ 54.7%:

Ընդ որում, աղյուսակ 3-ից հետևում է նաև, որ քննարկվող հանցագործությունների բացահայտման առավել բարձր ցուցանիշն արձանագրվել է 2012 թ.-ին (82.1%), իսկ առավել ցածրը՝ 2014 թվականին (22.4%): Բացի այդ, 2012-2014 թթ. ընթացքում ակնհայտ է բացահայտված մաքսանենգությունների մասնաբաժնի էական նվազումը: Տվյալ հանգամանքը, մեր կարծիքով, գլխավորապես պայմանավոր-

ված է ոչ թե իրավապահ մարմինների գործունեության թերությունների և բացթողումների ավելացմամբ, այլ հանցագործությունների (այդ թվում՝ մաքսանենգությունների) հաշվառման-գրանցման աշխատանքների բարելավմամբ (լատենտայնության մակարդակի նվազեցմամբ): Այնուամենայնիվ, քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ են դրանց բացահայտմանն ուղղված լրացուցիչ ջանքեր, որոնք կնպաստեն նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործման ապահովմանն ու սոցիալական արդարության վերականգնմանը:

Այսպիսով, մեր կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ ՀՀ-ում վերջին տասը տարիների ընթացքում գրանցված մաքսանենգությունների շարժընթացում հստակ միտումներ չեն նկատվում՝ դրանց քանակը բնութագրող թվերը մե՛րթ նվազում են, մե՛րթ աճում: Միջինացված ցուցանիշներով, սակայն, ընդհանուր առմամբ արձանագրվում է արտահայտված աճի միտում, ինչը լուրջ մտահոգության տեղիք է տալիս:

Միևնույն ժամանակ, վերոհիշյալ հանցագործությունների մասնաբաժինը բավականին մեծ է ինչպես ընդհանուր հանցավորության (0.68%), այնպես էլ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում (13.5%):

Մաքսանենգությունների կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսված արարքները (65.5%), որոնց հաջորդում են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվածները (31.6%): Ընդ որում, վերջիններիս շարքում գերակայում են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ու խիստ ներգործող նյութերի մաքսանենգության դեպքերը: Քննարկվող հանցագործությունների կառուցվածքում ամենափոքր մասնաբաժինն ունեն ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով նախատեսված արարքները (0.2%): Ընդ որում, դրանց շարքում գրանցված բոլոր դեպքերում մաքսանենգությունը կատարվել է պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով: Փորձագիտական տարբեր գնահատականներով, սակայն, ՀՀ-ում կատարվող մաքսանենգությունների շուրջ կեսը, եթե ոչ ավելին, իրականացվում են մաքսային ծառայողների և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ, ինչը նպաստում է նաև դրանց լատենտայնությանը:

Մաքսանենգությունների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 4-րդ մասով նախատեսված արարքների մասնաբաժինը նույնպես բավականին փոքր է (2.7%): Փորձագիտական գնահատականներով, սակայն, կազմակերպված հանցավոր խմբերի կողմից կատարվող մաքսանենգությունների լատենտայնության մակարդակը նույնպես բավականին բարձր է:

Բացի այդ, բոլոր այն տարիների ընթացքում, երբ գրանցված մաքսանենգությունների թիվը, նախորդ տարվա համեմատ, նվազել է, դրանց հասարակ տեսակի մասնաբաժինը փոքրացել է: Զուգահեռաբար մեծացել է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ու խիստ ներգործող նյութերի մաքսանենգության մասնաբաժինը, ինչը ևս լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Բանն այն է, որ մաքսանենգությունների կառուցվածքում տեղի ունեցող բացասական փոփոխությունները կապված են ոչ միայն հանցավոր գործունեության կազմակերպված ձևերի տարածման, այլև թմրամիջոցների ապօրինի շրջանառության ընդլայնման հետ:

Վերջապես, 2012-2014 թթ. ընթացքում ՀՀ-ում նկատվում է բացահայտված մաքսանենգությունների մասնաբաժնի էական նվազում, ինչը գլխավորապես կապված է ոչ թե իրավապահ մարմինների գործունեության թերությունների և բացթողումների ավելացման, այլ նշված հանցագործությունների հաշվառման-գրանցման աշխատանքների բարելավման (լատենտայնության մակարդակի նվազեցման) հետ:

# СОСТОЯНИЕ, СТРУКТУРА И ДИНАМИКА КОНТРАБАНДЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Гор Мирзоян**
*Аспирант кафедры уголовного права ЕГУ*

В статье автором на основании результатов собственного проведенного исследования и обобщения статистических данных, а также результатов исследований ученых-юристов выявлены и детально проанализированы количественные и качественные показатели, характеризующие контрабанду в Республике Армения. В частности, выявлены основные тенденции исследуемых преступлений за последнее десятилетие, проанализированы показатели, характеризующие их состояние (уровень), структуру и динамику.

В данном контексте отмечается, что доля контрабанды в РА довольно велика как в структуре общей преступности (0.68%), так и прступлений против экономической деятельности (13.5%). Между тем, в структуре исследуемых преступлений наиболее распространена контрабанда, предусмотренная ч. 1 ст. 215 УК РА (65.5%). Контрабанда наркотических средств и психотропных веществ составляет (31.6%) от общего числа преступлений, предусмотренных ст. 215 УК РА.

# LEVEL, STRUCTURE AND DYNAMICS OF SMUGGLING IN THE REPUBLIC OF ARMENIA

**Gor Mirzoyan**
*PHD Student of the YSU Chair of Criminal Law*

In the presented article the author on the basis of the results of his own study and compilation of statistics and research findings of legal scholars identified and analyzed in detail the quantitative and qualitative indicators of smuggling in the Republic of Armenia. In particular, the study identified the main trends of crime over the past decade, analyzed indicators characterizing their level, the structure and dynamics.

In this context it is mentioned that the proportion of contraband in the RA is quite high in the structure of general criminality (0.68%) and crimes against economic activity (13.5%). Meanwhile, in the structure of the reviewed crimes most prevalent smuggling provided under Part. 1 of Article 215 of the Criminal Code of the RA (65.5%). The proportion ov the smuggling of drugs and psychoactive substances is 31.6% of the total number of crimes provided under Article 215 of the Criminal Code of the RA.

**Բանալի բառեր** – *մաքսանենգություն, հանցավորության վիճակ, կառուցվածք և շարժընթաց, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ, կազմակերպված հանցավորություն, բացահայտում*

**Ключевые слова** – *контрабанда, состояние, структура и динамика преступности, наркотики и психотропные вещества, преступления в сфере экономики, организованная преступность, раскрываемость*

**Key words** – *smuggling, tendences, structure and dynamics of criminality, drugs and psychoactive substances, economic crimes, organized criminality, disclosure*